PRESS RELEASE

PR24/135

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՀ աշխատակազմը Հայաստանի հետ ԱՄՀ աշխատակազմի մակարդակով համաձայնություն է ձեռք բերել «Պահուստային ծրագրի» երրորդ ամփոփիչ ստուգման շուրջ

ԱՆՀԱՊԱՂ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Առաքելության ավարտի մամլո հաղորդագրությունները ներառում են ԱՄՀ աշխատակազմի թիմերի հայտարարությունները, որոնցով հաղորդվում են երկիր կատարած այցից հետո նախնական եզրահանգումները: Սույն հայտարարության մեջ արտահայտված են ԱՄՀ աշխատակազմի տեսակետները և պարտադիր չէ, որ դրանք ներկայացնեն ԱՄՀ Գործադիր խորհրդի տեսակետները: Այս առաքելության նախնական եզրահանգումների հիման վրա աշխատակազմը կպատրաստի զեկույց, որը ղեկավարության կողմից հաստատվելուց պարագայում կներկայացվի ԱՄՀ Գործադիր խորհրդին՝ քննարկման և որոշում կայացնելու համար:

- *ԱՄՀ աշխատակազմը և Հայաստանի իշխանություններն ԱՄՀ աշխատակազմի մակարդակով համաձայնություն են ձեռք բերել 2022 թվականի «Պահուստային ծրագրի» (անգլ.՝ «Stand-By Arrangement») երրորդ ամփոփիչ ստուգման շուրջ: Հայաստանի իշխանությունները «Պահուստային ծրագիրը» դիտարկում են որպես կանխարգելիչ: «Պահուստային ծրագրի» նպատակն է աջակցել Կառավարության քաղաքականության և բարեփոխումների օրակարգին՝ տնտեսական և ֆինանսական կայունությունը պահպանելու, ինչպես նաև աճի բարձր և կայուն տեմպեր ապահովելու համար:*

- *Ներքին սպառման և ներդրումների բարձր ցուցանիշներով պայմանավորված՝ պահպանվել է ՀՆԱ-ի աճի՝ պատմական տվյալների համեմատ շատ բարձր տեմպը՝ 2023 թվականին կազմելով 8.7 տոկոս: Ակնկալվում է, որ ՀՆԱ-ի աճի տեմպն ավելի չափավոր կդառնա 2024 թվականին՝ կայունանալով մոտ 6 տոկոսի շրջանում:*

- *Քաղաքականության գերակայություններն են մակրոտնտեսական կայունության պահպանումը, լրացուցիչ հարկային եկամուտների հավաքագրումը՝ ապահովելու համար առաջնահերթ ծախսերը, ներառյալ՝ փախստականների ինտեգրման ուղղությամբ, ինչպես նաև՝ ինստիտուցիոնալ համակարգերի ամրապնդումը և կառուցվածքային բարեփոխումների շարունակականության ապահովումը՝ արտադրողականությունը բարձրացնելու և ավելի ներառական տնտեսական աճը խթանելու նպատակով:*

Վաշինգտոն, Կոլումբիայի շրջան, ԱՄՆ, [XX-ը մայիսի, 2024 թ.]: Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) թիմը՝ Իվա Պետրովայի գլխավորությամբ, մարտի 11-ից 21-ն այցելեց Երևան՝ «Պահուստային ծրագրի» երրորդ ամփոփիչ ստուգման կապակցությամբ Հայաստանի հետ քննարկումներ անցկացնելու նպատակով: Քննարկումների ավարտին տիկին Պետրովան հանդես եկավ հետևյալ հայտարարությամբ.

700 19th Street NW
Washington, DC 20431
USA

«Ուրախ եմ հայտարարել, որ ԱՄՀ թիմը և Հայաստանի իշխանություններն ԱՄՀ աշխատակազմի մակարդակով համաձայնություն են ձեռք բերել Հայաստանի տնտեսական բարեփոխումների ծրագրին աջակցող եռամյա «Պահուստային ծրագրի» երրորդ ամփոփիչ ստուգման ամփոփմանն առնչվող քաղաքականությունների շուրջ: Ձեռք բերված համաձայնությունը ենթակա է հաստատման ԱՄՀ Գործադիր խորհրդի կողմից, որը սույն ամփոփիչ ստուգմանը կանդրադառնա հունիսի կեսերին նշանակված նիստի ընթացքում: Խորհրդի հաստատումը հնարավորություն կընձեռի հասանելի դարձնել մոտ 24.4 միլիոն ԱՄՆ դոլար (18.4 միլիոն ՓՀԻ՝ փոխառության հատուկ իրավունք), որի արդյունքում «Պահուստային ծրագրի» մեկնարկից ի վեր հասանելի դարձվող ընդհանուր գումարը կհասնի մոտ 97.7 միլիոն ԱՄՆ դոլարի (73.6 միլիոն ՓՀԻ):

«Հայաստանի տնտեսական աճի բարձր տեմպը պահպանվել է 2023 թվականին. տնտեսությունն աճել է 8.7 տոկոսով՝ պայմանավորված մասնավոր սպառման, առևտրի և ներդրումների բարձր ցուցանիշներով: Գնաճը զգալիորեն նվազել է՝ մարտին (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ) հասնելով -1.2 տոկոսի, որը հիմնականում պայմանավորված է եղել սննդամթերքի գների նվազմամբ, դրամի արժևորմամբ և նախորդող շրջանում դրամավարկային քաղաքականությունն ավելի զսպողական դարձնելու հետաձգված ազդեցությամբ: Ընթացիկ հաշվի պակասուրդի ցուցանիշը 2023 թվականին շարունակել է պահպանվել ՀՆԱ-ի 2 տոկոսի մակարդակում՝ պայմանավորված զբոսաշրջության բարձր տեմպերով: 2023 թվականին բյուջեի պակասուրդը կազմել է 2 տոկոս, ինչը կանխատեսվածից ավելի ցածր էր՝ պայմանավորված ծախսերի թերակատարմամբ: Բանկային համակարգն ունի կապիտալի և իրացվելիության ամուր բուֆերներ, և համակարգի շահութաբերության բարձր ցուցանիշը պահպանվում է»:

«Ակնկալվում է, որ աճի տեմպն ավելի չափավոր, սակայն՝ բարձր կլինի 2024 թվականին՝ մոտ 6 տոկոսի շրջանում՝ պայմանավորված սպառմամբ և պետական կապիտալ ծախսերով: Տարվա երկրորդ կեսին ակնկալվում է գնաճի արագացում: Հեռանկարում հնարավոր էական ռիսկերը բխում են աշխարհաքաղաքական լարվածություններից և արտաքին առևտրի գործընկեր պետություններում աճի տեմպերի խաթարումից կամ կապիտալի ներհոսքի միտումների՝ հակառակ ուղղությամբ կտրուկ փոփոխություններից: Աճի տեմպի առումով հնարավոր են նաև դրական անակնկալներ՝ արտահանումից ստացվող ներհոսքի նախատեսվածից ավելի բարձր մակարդակի պարագայում և Կառավարության 2021-2026 թվականների ծրագրով նախատեսված կառուցվածքային բարեփոխումներն ավելի արագ իրագործելու դեպքում»:

«2024 թվականի պետական բյուջեի պակասուրդի թիրախային ցուցանիշի պատշաճ մակարդակը շարունակում է պահպանվել՝ հաշվարկներում ներառելով սոցիալական պաշտպանության, ենթակառուցվածքի և ազգային անվտանգության գծով նախատեսվող առաջնահերթ ծախսերը: Հաշվի առնելով հեռանկարում անորոշության բարձր մակարդակը և տնտեսության գերտաքացման առկա ռիսկերը՝ 2025-27 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրում անհրաժեշտ է խուսափել պահանջարկի ավելորդ ճնշումներ առաջացնելուց և միաժամանակ հավասարակշռություն պահպանել մակրոֆիսկալ կայունության պահպանման և Հայաստանի զարգացման կարիքներին աջակցելու նպատակների միջև: Ծախսային ճնշումների ավելացման պարագայում անհրաժեշտ կլինի զգուշորեն ընտրել միջնաժամկետ հատվածի առաջնահերթությունները և հարկային քաղաքականության և եկամուտների վարչարարության վճռական ջանքեր գործադրել՝ բավարար ֆիսկալ ռեսուրսներ ձևավորելու և պարտքի չափավոր մակարդակը պահպանելու համար: Ֆիսկալ ոլորտում գործադրվող ջանքերն հաջողությամբ պսակելու համար շարունակում է վճռորոշ մնալ այնպիսի բարեփոխումների իրագործումը, որոնց արդյունքում բարձրացվում է Կառավարության ծախսերի կատարման

արդյունավետությունը, բարելավվում է պետական ֆինանսների կառավարումը, այդ թվում՝ ֆիսկալ ռիսկերի պատշաճ կառավարման, թափանցիկության և պետական կառավարման միջոցով, և ապահովվում են ավելի բարձրորակ պետական ներդրումներ»։

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն (ՀՀ ԿԲ) աստիճանաբար նվազեցրել է քաղաքականության տոկոսադրույքը, ինչը պատշաճ մոտեցում է՝ ներկայիս ցածր գնաճի պայմաններում։ Տոկոսադրույքի վերաբերյալ հետագա որոշումներում հարկ է շարունակել հաշվի առնել գնաճի զարգացումները և գնաճային սպասումները։ ՀՀ ԿԲ-ի հաղորդակցության նոր ռազմավարության իրագործումը՝ դրամավարկային քաղաքականության թափանցիկության մակարդակը բարձրացնելու և դրա նպատակների հստակությունն ապահովելու համար, կնպաստի դրամավարկային քաղաքականության որոշումների կայացման համար վերջերս ընդունված՝ ռիսկերի վրա հիմնված մոտեցման իրագործմանը։ Ճկուն փոխարժեքը պետք է շարունակի հանդես գալ որպես ցնցումները կլանող հիմնական գործոն։ Ողջունելի է միջազգային պահուստների բուֆերների առողջ մակարդակը պահպանելու՝ իշխանությունների վճռականությունը։ Պետք է շարունակվեն ՀՀ ԿԲ-ի պրուդենցիալ և վերահսկողական համակարգերի ուժեղացմանն ուղղված ջանքերը, ինչը կնպաստի ֆինանսական հատվածի ռիսկերի զսպմանը և կաջակցի ՀՀ ԿԲ-ի գործառնական անկախության պահպանմանը»։

«Կառավարության կառուցվածքային բարեփոխումների օրակարգի կենտրոնում, ինչպես և հարկն է, մնում են ներառական տնտեսական աճի խթանումը, այդ թվում՝ աշխատուժի մեջ բնակչության խոցելի խմբերի մասնակցության աճի խթանումը, անվճարունակության համակարգի կատարելագործումը և երկրի արտահանման զամբյուղի և շուկաների բազմազանեցումը։ Թվարկված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է զբաղվածության և արտահանման հստակ և լիարժեք ծախսային հաշվարկներով ապահովված ռազմավարություններ մշակել և իրագործել, ինչպես նաև՝ որպես առաջնահերթություն դիտարկել ներդրումներին աջակցող և գործարարության միջավայրը բարելավող բարեփոխումները»։

«ԱՄՀ թիմն արգասաբեր քննարկումների և համագործակցության համար շնորհակալություն է հայտնում Հայաստանի իշխանություններին, ինչպես նաև՝ մասնավոր հատվածի, զարգացմանն աջակցող գործընկեր կառույցների և դիվանագիտական համայնքի ներկայացուցիչներին»։